

1.2.5. Կ ա պ

Հանրապետությունում 2000թ. հունվար-դեկտեմբերին, ըստ կապի կազմակերպությունների հաշվետվությունների տվյալների, բնակչությանը, հիմնարկներին, կազմակերպություններին մատուցած ծառայություններից ստացված ընդհանուր հասույթը փաստացի գներով կազմել է 36593.5 մլն. դրամ, որից հիմնական գործունեությունից՝ 34921.6 մլն. դրամ:

Կապի համակարգի հիմնական գործունեությունից ստացված փաստացի հասույթի կառուցվածքը

	2000 թ. հունվար-դեկտեմբեր	2000թ.հունվար-դեկտեմբերը 1999թ. հունվար-դեկտեմբերի նկատմամբ, համադրելի գներով (տոկոսներով)
Կապի համակարգի հիմնական գործունեությունից ստացված հասույթը, ընդամենը մլն. դրամ	34921.6 ¹	96.1 [◊]
<i>դրանցից՝</i> բնակչությանը մատուցված կապի ծառայություններից ստացված հասույթը, ընդամենը	15039.3	105.4
<i>այդ թվում՝</i> փոստային կապից	287.0	2.4անգամ
հեռագրային կապից	36.2	87.7
միջազգային և ներհանրապետական հեռախոսային խոսակցություններից	9523.7	102.1
բաժանորդային վարձերից և միանվագ ծառայություններից	5026.9	105.0
ծայնային-լարային ծառայություններից	91.6	85.4
այլ ծառայություններից (այդ թվում՝ ինտերնետից և էլեկտրոնային կապից)	73.9	2.2անգամ

Նշված հասույթից բնակչությանը մատուցված ծառայություններին բաժին է ընկել 15039.3 մլն. դրամ, որի 63.3 տոկոսը կազմել են միջազգային և ներհանրապետական հեռախոսային խոսակցություններից, 33.5 տոկոսը՝ բաժանորդային վարձերից և միանվագ ծառայություններից, 1.9 տոկոսը՝ փոստային կապի ծառայություններից ստացված հասույթը, 0.6 տոկոսը՝ ծայնային - լարային, 0.5տոկոսը՝ այլ ծառայություններից, 0,2 տոկոսը՝ հեռագրային:

Փոստային կապ. 2000թ. հունվար-դեկտեմբերին փոստային կապի մատուցած ծառայություններից ստացված հասույթը կազմել է 934.7 մլն. դրամ, որից բնակչությանը մատուցած ծառայություններից՝ 287.0 մլն. դրամ:

2000թ. հունվար-դեկտեմբերին գնահատված խաչկապերի և նամակների քանակը, 1999թ. հունվար-դեկտեմբերի նույն ցուցանիշի նկատմամբ, աճել է 79.4 տոկոսով, սովորական գնահատված ծանրոցների քանակը՝ 57.1 տոկոսով, նամակների,բացիկների,հասարակ և պատվիրված խաչկապերի քանակը՝ 27.8 տոկոսով: Միննույն ժամանակ միջազգային ելքային նամակների, փոստային բացիկների, խաչկապերի ծավալը աճել է 4.3 տոկոսով: Փոստային, հեռագրային դրամական փոխանցումների քանակը (առանց կենսաթոշակների) նվազել է 2.3 անգամ, բյուջեով նախատեսված ընտանեկան նպաստների վճարումների քանակը՝ 35.9 տոկոսով,կենսաթոշակների վճարումների քանակը՝ 21.2 տոկոսով, ըստ ՀՀ մանուլի տարածման գործակալության տվյալների, պարբերական հրատարակությունների (թերթեր, ամսագրեր) տպաքանակի իրացումը (բաժանորդագրություն և հատավաճառ)՝ 11.1 տոկոսով:

¹ Հաշվարկված է առանց ավելացված արժեքի հարկի
 ◊ Աճի տեմպը հաշվարկելիս ճշգրտված են 1999թ. տարեկան տվյալները:

Չեռագրային կապ. 2000թ. հունվար-դեկտեմբերին հեռագրային կապի մատուցած ծառայություններից ստացված հասույթի ծավալը կազմել է 70.9 մլն. դրամ, որից բնակչությանը մատուցած ծառայություններից՝ 36.2 մլն. դրամ:

2000թ. հունվար-դեկտեմբերին հեռագրերի քանակը 1999թ. հունվար-դեկտեմբերի նկատմամբ նվազել է 12.1 տոկոսով, այդ թվում ԱՊՀ երկրներ՝ 4.2 տոկոսով, իսկ այլ երկրներ՝ 25.0 տոկոսով: Հաղորդված 92.1 հազ. հեռագրերից 37.4 տոկոսը բաժին է ընկել ԱՊՀ երկրներին, 0.7 տոկոսը՝ այլ երկրներին, մնացածը՝ ներհանրապետական (միջքաղաքային):

Չեռախոսային կապ. 2000թ. հունվար-դեկտեմբերին, միջազգային և ներհանրապետական հեռախոսային խոսակցությունների ծառայություններից ստացված հասույթի ծավալը կազմել է 22452.5 մլն. դրամ, որի 42.4 տոկոսը բաժին է ընկել բնակչության կողմից կատարված խոսակցություններից ստացված հասույթին: Միջազգային և ներհանրապետական հեռախոսային խոսակցությունների քանակի (57722.4 հազ.միավոր) 28.4 տոկոսը բաժին է ընկել ԱՊՀ երկրների (1999թ. հունվար-դեկտեմբերի 22.5 տոկոսի դիմաց), 3.4 տոկոսը՝ այլ երկրների հետ (1999թ. հունվար-դեկտեմբերի 3.0 տոկոսի դիմաց), մնացածը՝ հանրապետության ներսում կատարված միջքաղաքային հեռախոսային խոսակցություններին: 2000թ. հունվար-դեկտեմբերին ԱՊՀ երկրների հետ միջքաղաքային խոսակցությունների քանակը 1999թ. նույն ժամանակաշրջանի համեմատ ավելացել է 15.6 տոկոսով, իսկ այլ երկրների հետ ավելացել է՝ 3.4 տոկոսով:

Միջազգային և ներհանրապետական հեռախոսային խոսակցությունների **կանչերի** ընդհանուր քանակը կազմել է 142608.2 հազ. միավոր, որից ավարտվել են խոսակցությամբ՝ 37.5 տոկոսը:

Միջազգային և ներհանրապետական հեռախոսային խոսակցությունների պատվերների քանակը

	2000թ. հունվար-դեկտեմբեր	2000թ. հունվար-դեկտեմբերը 1999թ. հունվար-դեկտեմբերի նկատմամբ (տոկոսներով)
Միջազգային և ներհանրապետական հեռախոսային խոսակցությունների պատվերների քանակը, հազ.հատ <i>այդ թվում՝</i>	5363.2	99.7
- Միջազգային	1272.6	84.3
- Ներհանրապետական <i>որից չեն կատարվել՝</i>	4090.6	105.8
- Միջազգային	313.9	86.0
-Ներհանրապետական	867.5	143.7

Միջազգային և ներհանրապետական հեռախոսային խոսակցությունների պատվերների ընդհանուր քանակի 23.7 տոկոսը բաժին է ընկել միջազգային հեռախոսային խոսակցությունների պատվերներին (1999թ. հունվար-դեկտեմբերի 28.1 տոկոսի դիմաց), իսկ մնացածը՝ ներհանրապետական: Մինևույն ժամանակ, միջազգային հեռախոսային խոսակցությունների պատվերներից չեն կատարվել 24.7 տոկոսը (1999թ. 24.1 տոկոսի դիմաց), իսկ ներհանրապետական պատվերներից 21.2 տոկոսը (1999թ. 15.6 տոկոսի դիմաց):

2001թ. հունվարի 1-ի դրությամբ հիմնական հեռախոսային բաժանորդների թվաքանակը կազմել է 527376 միավոր, որի 89.7 տոկոսը բաժին է ընկել բնակարաններում տեղադրված հեռախոսային ապարատներին:

2000թ. հունվար-դեկտեմբերին քաղաքային և գյուղական հեռախոսային ցանցի բաժանորդների թվաքանակը 1999թ.-ի նույն ժամանակաշրջանի նկատմամբ նվազել է 14732-ով կամ 2.7 տոկոսով: Հեռախոսային բաժանորդների թվաքանակի նվազումը հիմնականում բացատրվում է հեռախոսավարձի բարձր սակագներով, ինչպես նաև բնակչության անվճարունակությամբ:

2000 հունվար-դեկտեմբերի տաքսաֆոնների քանակը կազմել է 911 միավոր և 1999թ. հունվար-դեկտեմբերի նկատմամբ ավելացել է 142 միավորով: